Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 11.12.2020թ. թիվ 2011993153 որոշումն անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման թողնելու մասին

<<12>> 01 2021թ. 7-13- 50 ք.Երևան

Ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ Ե.Կարապետյանս, վերանայելով Արեգ Շուշյանի ՄԴ/158155-20 և ՄԴ/158223-20 նույնաբովանդակ դիմումների քննարկման արդյունքում ստեղծված նյութերը՝

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Դեմիրճյան փողոցի 33-րդ շենքի 11-րդ բնակարանի բնակիչ Արեգ Շուշյանը նույնաբովանդակ դիմումումներով խնդրել է վերանայել Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2011993153 որոշումը՝ նշելով, որ կազմվել է օրենքով սահմանված ժամկետի խախտմամբ, այն գերազանցվել է արձանագրություն կազմելու 14 աշխատանքային օրվա թույլատրելի ժամանակահատվածը:

Դիմումի քննարկման արդյունքում պարզվել է, որ վարչական ակտը ենթակա է կատարման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտում կատարած անձը ենթակա է պատասխանատվության իրավախախտումը կատարելու ժամանակ և վայրում գործող օրենսդրության հիման վրա:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 9-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտում (զանցանք) է համարվում պետական կամ հասարակական կարգի, սոցիալիստական սեփականության, քաղաքացիների իրավունքների և ազատությունների, կառավարման սահմանված կարգի դեմ ոտնձգվող հակաիրավական, մեղավոր (դիտավորյալ կամ անզգույշ) այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվություն:

ՀՀ կառավարության <<Ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների և պայմանների ցանկը հաստատելու մասին>> 28.06.2007թ. թիվ 955-Ն որոշման 18-րդ կետի համաձայն՝ **<<Լուսացույցի կամ կարգավորողի արգելող ազդանշանի դեպքում վարորդը պետք է կանգ առնի <<Կանգ-գիծ>> գծանշման առջև>>**:

Վարչական իրավախախտումների մասին ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 37-րդ մասի համաձայն՝ «Կանգ-գիծ» գծանշման պահանջները չկատարելու համար սույն հոդվածի 1-ին մասով, ինչպես նաև տրանսպորտային միջոցների երթևեկության հակադիր հոսքերն իրարից բաժանող գծանշումների պահանջները չկատարելու համար սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված վարչական իրավախախտումն ունի նվազ նշանակություն այն դեպքում, երբ տրանսպորտային միջոցի անիվներից ոչ մեկն ամբողջությամբ չի հատել գծանշումը, և դրա հետևանքով երթևեկության մյուս մասնակիցների համար խոչընդոտ կամ վթարային իրադրություն առաջացնելու ակնհայտ վտանգ չի ստեղծվել, ինչպես նաև այն

դեպքում, երբ իրավախախտումն անխուսափելիորեն կատարվել է երթևեկության այլ մասնակցի գործողության կամ անգործության պատճառով:

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 11.12.2020թ. թիվ 2011993153 որոշման հիմքում դրված տեսանյութը փաստում է, որ դիմումատուին պատկանող տրանսպորտային միջոցի վարորդը 22.11.2020թ. ժամը՝ 15:23-ին Երևան քաղաքի Սարալանջ – Ավետիսյան - Փափազյան փողոցների խաչմերուկում չի պահպանել առկա 1.12՝ <<Կանգ գիծ>> գծանշման պահանջը՝ **տրանսպորտային միջոցի չորս անիվներով** հատելով այն, որը չի կատարվել երթևեկության այլ մասնակցի գործողության կամ անգործության պատճառով:

Նշված իրավախախտման համար պատասխանատվություն է նախատեսված Վարչական իրավախախտումների մասին ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասով, ուստի վարչական տույժ նշանակելու մասին որոշումն իրավաչափ է և օրինական:

Ինչ վերաբերվում է դիմումատուի պնդմանը՝ որոշման կայացման ժամկետի խախտման վերաբերյալ, ապա <<Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին>> օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ **վարչական վարույթը բաղկացած է իրավախախտման հատկանիշների պարզման և վարչական ակտի ընդունման փուլերից**: Նույն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը՝ իրավախախտման հատկանիշների պարզելու համար, սահմանել է **15 աշխատանքային օր**, իսկ 7-րդ հոդվածի 1-ին մասը՝ վարչական ակտը ընդունելու համար, իրավախախտման հատկանիշները պարզելուց հետո՝ **2 աշխատանքային օր**: Այսինքն վարույթ իրականացնող մարմինը վարչական տույժ նշանակելու մասին որոշումը կարող է ընդունել **17 աշխատանքային** օրվա ժամկետում:

Վիճարկվող որոշման հիմքում դրված իրավախախտումն արձանագրվել է 22.11.2020թ., իսկ վարչական ակտը կայացվել է 11.12.2020թ.՝ այսինքն վերը նշված օրենքով սահմանված ժամկետում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 11.12.2020թ. թիվ 2011993153 որոշումը թողնել անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:
3. Սույն որոշման օրինակն ուղարկել Արեգ Շուշյանին:

Ե.Կարապետյան

Կատարող՝ Հ. Կարապետյան
Հեռ. 011-54-47-83